«ԱՐՄԱՎԻՐ 1» ՎԿ

ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՎՈՂ ՈՒՍՈՒՑՉԻ

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Հետազոտության թեման՝ Համագործակցային մեթոդի ազդեցությունը գրականության դասերին

Հետազոտող ուսուցիչ՝ Գայանե Սարգսյան

Դպրոց՝ Նորավանի միջնակարգ դպրոց

Մենթոր ուսուցիչ՝ Հասմիկ Պողոսյան

Արմավիր – 2023

Բովանդակություն

1. Նախաբան …….....…… 3-4

2.Գրականության ակնարկ ……5-9

3.Գործնական համատեքստ……10-14

4. Ամփոփում…… 15-16

5. Գրականություն……..... 17

ՆԱԽԱԲԱՆ

<<Այն , ինչ այսօր երեխաները կարող են անել միասին,
վաղը նրանք դա կանեն միայնակ>>
Լև Վիգոտսկի

Աշխարհը փոխվում է արագընթաց տեմպերով և անկանխատեսելիորեն: Տեղեկատվությունն ու գիտելիքները ձևավորում են մեր աշխարհայացքը: Հասարակական բոլոր փոփոխությունները անդրադառնում են նաև կրթական համակարգին: Հայաստանում, ինչպես և ամբողջ աշխարհում ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով: Արագընթաց փոփոխությունները մարդուց պահանջում են նոր իրավիճակներին հարմարվելու, ճկուն գործելու հմտություններ: Հասարակաությունը դպրոցին և հատկապես ուսուցչին է լիազորել իր ապագայի կերտումը: Արդի հասարակությունը կարիք ունի ինքնուրույն և քննադատական մտածողություն ունեցող մարդու: Մասնավորապես որոշ մասնագիտությունների ուղղությամբ աշխատող մարդկանց գործունեության մեջ ֆունցիոնալ գրագիտությունը պարզապես հրամայական պահանջ է: Անառարկելի է, որ անձի համագործակցային կարողության ձևավորման հիմքը դրվում է տարրական դպրոցում, և եթե կրթության այս օղակում տարրական դպրոցում չի ձևավորվում գրագետ և ճիշտ հաղորդակցվելու և համագործակցելու կարողությունը, հետագա ուսումնական գործընթացում դժվար է լրացնել այդ բացը: Այս աշխատանքում ցանկանում ենք անդրադառնալ համագործակցային մեթոդների, հնարների, փոքր աշխատանքային խմբերի արդյունավետ կիրառելիությանը: Համագործակցային մեթոդների կիրառումն ինքնանպատակ չէ:

Արդիականությունը: Անցել են այն ժամանակները, երբ երեխային համեմատում էին սպունգի հետ և ուսուցման գործընթացում նրան տալիս պատրաստի գիտելիքներ: Այսօր ավելի կարևորվում է սովորել սովորեցնելը, քան ուղղակի սովորեցնելը: Ժամանակակից կրթական ոլորտում անհրաժեշտ է աշխատել այնպիսի պայմաններում, երբ գիտելիքներն արագ են հնանում, քան հասցնում են յուրացվել սովորողի կողմից: Կրթական գործընթացի արդյունավետությունը հիմնականում պայմանավորված է ուսուցման միջոցների ընտրությամբ, որոնք կօգնեն հասնել ծրագրի վերջնարդյունքին՝ նպաստելով սովորողների

հմտությունների և կարողությունների ձեռքբերմանը: Ուսուցչի նպատակը սովորողի անհատական գործունեության զարգացումն է, տալ այնպիսի դաստիարակություն, որ համապատասխանի ժամանակակից պահանջներին: այդ պատճառով ուսուցումն այնպես պետք է կազմակերպել, որ յուրաքանչյուր սովորող հնարավորություն ունենա զարգանալ և բացահայտվել որպես ստեղծագործ անհատ: Առաջնահերթությունը տրվում է ոչ թե ինչ ենք տալիս սովորողին, այլ ինչպես ենք տալիս:

Կան բազմաթիվ տեխնոլոգիական լուծումներ, որոնք հնարավորություն են տալիս ուսուցիչներին կախված դասի տեսակից և ընտրված մեթոդից ուսումնական գործընթացը դարձնել ավելի հետաքրքիր և արդյունավետ: Աշակերտները հեշտությամբ են ներգրավվում ինտերակտիվ միջոցների գործունեության ոլորտ, որտեղ զարգանում է բնութագրիչ հատկանիշները բացահայտելու, դրանք իրար հետ համեմատելու, համադրելու կարողությունները, ինքնատիրապետումը, ռեակցիայի արագությունը, երևակայությունը:

Նպատակները: Բացահայտել ուսուցման գործընթացում համագործակցային մեթոդի ազդեցությունը սովորողների վրա: Պարզել մեթոդի կիրառման ժամանակ հանդիպող դժվարությունները և առաջ քաշել լուծման ուղիներ:

Խնդիրները:

- Բարձրացնել ուսուցման գործընթացի արդյունավետությունը
- Բարձրացնել ուսուցման գործընթացում համագործակցային հնարներ կիրառելու միջոցով ավելի նորարար և ժամանակակից դասեր վարելու հմտությունները
- Բացահայտել ուսուցիչների դիրքորոշումներն ու մեթոդական իրազեկվածությունը թեմայի տեսանկյունից:

Հետազոտության ընթացքում օգտվել եմ ներքոհիշյալ հեղինակներից և համապատասխանաբար կատարել հղումներ՝ հետևելով օգտագործված գրականության մեջբերման էթիկային

Ուսուցման համագործակցային մեթոդների էությունն ու տեսակները

Համագործակցային ուսուցման կիրառումը սկսվում է դեռևս անտիկ դարաշրջանից: «Թալմուդը հասկանալու համար պետք է ընկեր ունենալ»,- գրված է Թալմուդում: Հռոմեացի փիլիսոփա Սենեկան ասում էր, որ սովորեցնողը կրկնակի է սովորում: Իսկ 17-րդ դարում Կոմենսկին հավաստում էր, որ սովորողները շահում են երբ սովորում են ուրիշից, նաև երբ սովորեցնում են ուրիշի: 18-րդ դարում Լանքաստերը և Բելլը Անգլիայում կիրառում են սովորողների փոխուսուցումը:

Համագործակցային ուսուցման հիմքում ընկած են հիմնականում երեք տեսություններ՝ սոցիալական փոխկախվածության, ճանաչողության զարգացման, վարքագծային ուսումնառության:

Սոցիալական փոխկախվածության տեսության ներկայացուցիչները (Կուրտ Կաֆկա, Կուրտ Լեվին) խումբը դիտում են որպես դինամիկ ամբողջություն, որտեղ շեշտադրվում է ընդհանուր նպատակից բխող փոխկախվածությունը. խմբի անդամներից մեկի վիճակի փոփոխությունը հանգեցնում է մյուսների վիճակների փոփոխության: Իսկ ներխմբային լարումը հանգեցնում է խմբի ընդհանուր նպատակի իրականացմանը:

Ճանաչողական զարգացման տեսությունն իր հիմքում ներառում է Պիաժեի, Վիգոտսկու, Բրունների հայացքները: Վիգոտսկին ասում էր՝ գիտելիքին հատուկ է սոցիալական որոշակի բնութագիր, և ծնվում է ծագած խնդիրների ըմբռնման և լուծման ընթացքում գործադրած համատեղ ջանքերով: Նյութը վերապատմելու կամ վերաշարադրելու ընթացքում սովորողներն արդեն ձևավորված ճանաչողական կառուցվածքներում որոշակի փոփոխություններ են կատարում: Հետևաբար, ըստ Վիգոտսկու, մտավոր աշխատանքի լավագույն ձևը սովորածը ընկերոջը բացատրելն է: Իսկ Ջերոմ Բրունները մշակեց հետազոտական ուսուցման գաղափարը, որը շրջադարձային եղավ: Նա ներկայացնում է ճանաչողական ուսուցման մի մոդել,

որտեղ տեղեկությունն անցնում է ընկալում-դասակարգում-յուրացում շղթայով և վերաճում գիտելիքի՝ հիմնվելով ոչ թե ինչ սովորելու, այլ ինչպես սովորելու սկզբունքի վրա:

Վարքագծային ուսումնառության տեսության կողմնակիցները շեշտադրում են խմբային աշխատանքի արդյունքի խրախուսումը, որը որոշակի դրդապատճառ կամ շարժառիթ (մոտիվացիա) է դառնում ուսուցման գործընթացի համար: Սքիները մշակեց ծրագրավորված ուսուցման մի ձև, ըստ որի՝ ուսումնական նյութը բաժանվում է տրամաբանական հաջորդականություն ներկայացնող փոքրիկ մասերի՝ քայլերի: Պատասխանելով համեմատաբար պարզ և հեշտ մի քանի հարցերի՝ սովորողները խրախուսանք են ստանում, ինչը դառնում է ուսուցման գործընթացը շարունակելու և նյութն ամբողջությամբ յուրացնելու խթան:

Խմբում սոցիալական փոխկապվածության գաղափարը ամբողջացրին ամերիկացի Ջոնսոն եղբայրները: Նրանք զարգացրին «Սոցիալական փոխկախվածության» տեսությունը՝ նշելով սոցիալական փոխկախվածության ազդեցությունը սովորողների նվաճումների, փոխհարաբերությունների, հոգեբանական առողջացման և սոցիալական զարգացման վրա՝ միջանկյալ փոփոխությունների միջոցով:

Ներկայումս համագործակցային ուսուցումը իր մեթոդներով լայն տարածում ունի սկանդինավյան երկրներում և ԱՄՆ-ում:

Համագործակցային ուսուցումն ավելի ու ավելի է կիրառվում՝ որպես աշխատանքային, դասավանդման և ուսուցման նոր մոտեցում և ռազմավարություն: Համագործակցային ուսուցումը խմբային աշխատանքի առավել բարձր աստիճանն է, որը ենթադրում է խմբային աշխատանքի որոշակի նոր մշակույթի ձևավորում: Այն ընձեռում է հնարավորություններ բազմաբնույթ կրթական նպատակներին հասնելու համար, ինչպիսիք են ակադեմիական հասկացությունների, սկզբունքների և իրադարձությունների ընկալումը, միջանձնային հմտությունների զարգացումը և այլն: Ժամանակակից ուսուցման պրակտիկայի լավագույն օրինակը փոքր խմբային աշխատանքն է, որի արմատները կարելի է գտնել սոցիոլոգների և ժամանակակից մանկավարժների աշխատանքներում: Փոքր խմբային աշխատանքը երբեմն պայմանականորեն անվանում են համագործակցային ուսուցում, համատեղ գործունեության վրա հիմնված ուսուցում կամ սոցիալական ուսուցում:[Վ.

Սահակյան 2020թ] Գոյություն ունեն համագործակցային ուսուցման տարբեր մեթոդներ, որոնք կիրառվում են դասի տարբեր փուլերում: Այդ ընթացքում աշակերտները ներքաշվում են մի գործընթացի մեջ, որտեղ նրանք կիսվում են գաղափարներով, փոխանակում են տեղեկատվություն, կատարում են ընտրություն և կայացնում են որոշումներ:

ՈՒՍՈՒՑՄԱՆ ՀԱՄԱԳՈՐԾԱԿՑԱՅԻՆ ՄԵԹՈԴՆԵՐԻ ԴԵՐԸ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Փոխներգործուն միջոցների սրընթաց զարգացումն արդի ժամանակաշրջանում բնականաբար նոր պահանջներ է դրել նաև կրթական համակարգերի առջև ինչպես ողջ աշխարհում, այնպես էլ Հայաստանում: Նրանք դարձել են որակյալ և արդիական կրթության հրամայական ու ուսուցման նորարարական գործիք: Ժամանակակից կրթական համակարգերում դրանք անչափ գործունակ միջոց են, որոնք խթանում են ստեղծագործ մտածողությունը, օգնում են սովորողներին ակտիվորեն ընդգրկվել ուսումնական գործընթացին, խորացնում ուսուցանվող նյութի իմացությունը, հասնում դպրոցական առարկաների առավել ընդգրկուն ընկալմանը, բարձրացնում առաջադիմությունը և հետաքրքրվածությունը, նպաստում ստանալու անձնական պահանջմունքներին ավելի համապատասխան գիտելիքներ, ունեն նորարարության զարգացումն արագացնելու, սովորողների գիտելիքները հարստացնելու ու խորացնելու, հմտությունները զարգացնելու, ինչպես նաև նրանց մոտիվացիան բարձրացնելու և ուսման մեջ արդյունավետ ներգրավելու ներուժ: {Ս.Խաչատրյան, 2020 }

Համագործակցային ուսուցման տարրերի կիրառումը նպաստում է դասարանում նոր՝ համագործակցային միջավայրի ձևավորմանը, օգնում է ուսուցչին հասկանալու համագործակցային ուսուցման էությունն ու պլանավորելու դասը, պայմաններ է ստեղծում ուսուցման արդյունավետության գնահատման, արժևորման համար, ինչպես նաև բարելավում է խմբային աշխատանքը [Երևան, «Անտարես» 2006, 122 էջ]:

Համագործակցային մեթոդով դասի կազմակերպման ընթացքում ուսուցիչը ստանձնում է մեծ թվով պարտականություններ՝

- դասերի, վարժությունների, առաջադրանքների պլանավորում.
- սովորողների խմբերի ձևավորում.

- սովորողների տեղաբաշխում.
- առաջադրանքի ներկայացում, և բացատրում.
- խմբային աշխատանքի հսկողություն և անհրաժեշտության դեպքում միջամտություն.
- օգնություն սոցիալական հմտությունների զարգացման հարցում.
- գնահատում:

Ուսուցումը համագործակցային կլինի այն դեպքում, երբ աշակերտները միասին, զույգերով կամ փոքր խմբերով աշխատում են մի ընդհանուր խնդիր լուծելու, մի ընդհանուր թեմա հետազոտելու կամ նոր միտք, նորարարություն իրականացնելու համար»: Համագործակցային ուսուցումը՝ որպես այլընտրանքային մանկավարժական մոտեցում, մեծ ճանաչում է ձեռք բերել բազմաթիվ երկրների ուսուցիչների և ուսուցիչների պատրաստում և վերապատրաստում իրականացնողների կողմից: Դրա լայն տարածմանը նպաստող գործոններից են՝

- դասարանում ուսումնական գործընթացը սովորողի անհատական առանձնահատկություններին հարմարեցնելը
- ուսուցման առանձնահատկություններին, ժամանակին համահունչ լինելը:

Համագործակցային ուսուցման իմաստն է՝

- Յուրաքանչյուր անհատի դարձնել ուժեղ անձնավորություն ժամանակակից հասարակության մեջ:
- Անհատին դարձնել ակտիվ և կարող լինելու խմբի անդամ և համագործակցելու [Երևան, «Անտարես» 2006, 122 էջ]:



Կրթության ժամանակակից համակարգը դասավանդողից և կրթություն իրականացնող մյուս օղակներից պահանջում է ծրագրերի անընդհատ նորացում, թարմացում, կատարելագործում, քանի որ ժամանակի հետ փոխվում է հասարակությունը, կրթության նպատակաուղղվածությունը, տեղի է ունենում տեխնիկական միջոցների նորացում: Հանրակրթության նպատակը ոչ միայն գիտելիք փոխանցելն է, այլ նաեւ գիտակից քաղաքացի ձեւավորելն է, ով կկարողանա կողմնորոշվել ժամանակակից աշխարհում: Զարգացած երկրները վաղուց են համոզվել, որ կրթության մեջ ոչ միայն պետք է ապահովել գիտատեխնիկական առաջընթացը , այլև ձևավորել պատրաստի նորարարական, ստեղծագործ աշխատանքի ունակ, իրազեկ, կրթված հասարակություն:

Ժամանակակից ուսուցման պրոգրեսիաներից մեկը ինտերակտիվ միջոցների ներդրումն է կրթական գործընթացում: Համագործակցային մեթոդների կիրառման դեպքում կազմակերպվում են ուսուցման այնպիսի պայմաններ, որոնց առկայությամբ բոլոր սովորողները ակտիվորեն փոխգործակցում են: Այդ իսկ պատճառով դասի կառուցվածքի մեջ ներառվում են ուսուցման ինտերակտիվ տեխնոլոգիաներ, այսինքն՝ կոնկրետ ձևեր և մեթոդներ, որոնք թույլ են տալիս դարձնել դասն անսովոր և ավելի հագեցած ու հետաքրքիր:

Այս դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում դասավանդողը առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է:

ԳՈՐԾՆԱԿԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏ

Ավանդական և համագործակցային մեթոդով իրականացվող դասերի համեմատականները

Որպես դասավանդման տեսություն՝ դիդակտիկան անընդհատ զարգացման ընթացքի մեջ է: Դիդակտիկայի կատարելագործումը, սկզբնավորվելով անտիկ աշխարհից, շարունակվում է մեր օրերում, և որքան քաղաքակրթվում է մարդը, այնքան մեծանում է այդ պահանջը, խորանում է դրա բովանդակային էությունը: Ուսուցումը դիդակտիկայի սկզբունքների և մեթոդների համալիր գործընթաց է, որոնք գործում են միասնաբար. յուրաքանչյուր դասին գործադրվում են մեկ կամ ավելի սկզբունքներ՝ մեկ կամ ավելի մեթոդների հետ համադրված: ՈՒսուցիչը գլխավոր տեղեկատուն լինելուց վերածվում է աշակերտին կողմնորոշողի՝ տեղեկությունների ահռելի հեղեղում դրանք ճիշտ և համակարգված ձեռք բերելու և նախաձեռնողականություն ցուցաբերելու համար: {Հ. Պետրոսյան}

Ավանդական և համագործակցային մեթոդի կիրառմամբ դասերի տարբերություններն են.

- Կրթական գործունեության մեջ փոխվում է շեշտադրությունը՝ ուսուցչակենտրոնից դեպի աշակերտակենտրոն: Փոխվում են ուսուցչի և աշակերտի դերերը:
- Համագործակցային ուսուցման ժամանակ մեծանում է աշակերտների համագործակցությունը միմյանց միջև, քանի որ նրանք ավելի հաճախ միմյանց օգնում են հաղթահարել տարբեր բնույթի բարդությունները, քան թե մրցակցում իրար դեմ: Պասիվ, դասին հազվադեպ մասնակցող աշակերտները քննարկումների ժամանակ դառնում են ավելի ակտիվ:
- Ավադական ուսուցման ժամանակ ուսուցումը միջինացված է՝ ուղղորդված միջին ունակություններով աշակերտների ուսումնառությանը: Այսինքն, աշակերտներին հնարավորություն է տրվում աշխատելու իրենց սեփական արագությամբ և ընդունակություններով, հանդես գալ սեփական նախաձեռնությամբ:

- Ավանդական դասի ժամանակ ուսուցիչը տեղեկատվական աղբյուր է, հիմնական իրազեկվածը: Օգտվելով ՏՀՏ -ից աշակերտները կարող են ավելին իմանալ, քան ուսուցիչը և դասի ժամանակ հանդես որպես նախաձեռնողներ, ստեղծել բանավեճեր, քննարկումներ, որը կնպաստի նրանց ինքնուրույն մտածելակերպի զարգաղմանը, ազատ արտահայտվելու կարողությանը, դառնում են ավելի ինքնավստահ: Նման պարագաներում ուսուցիչը սկսում է ավելի շատ զբաղվել ինքնակրթությամբ, զարգացնել մտահորիզոնը:
- Ավադական ուսուցման ժամանակ ուսուցիչը պլանավորում է ուսումնառության գործընթացը, և չկան պայմաններ ու դրդապատճառներ աշակերտների նախաձեռնողականության և ինքնուրույնության համար: Ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառմամբ դասերում աշակերտն է պլանավորում դասը (շրջված դասարան), ընտրում դասի նպատակն ու հիմնախնդիրները:
- Համագործակցային մեթոդներով կազմված թեստերի լուծման ժամանակ գործում է օբյեկտիվությունը, աշակերտը մասնակցում է գնահատմանը, տեսնում է իր ձեռքբերումներն ու բացթողումները; Գնահատականը չի դիտվում որպես ճնշման կամ իշխանության միջոց :

Չնայած վերը նշվածների, չպետք է կատարել հակադրում այն համատեքստում, որ ինտերակտիվ և աշակերտակենտրոն մոտեցումները բացարձակապես լավն են, իսկ ավանդական և ուսուցչակենտրոն մոտեցումները՝ վատը: Այս մոտեցումը գիտականորեն հիմնավորված չէ: Համագործակցային մոտեցումներն անհրաժեշտ են աշակերտներին մոտիվացնելու, ուսուցումը հետաքրքիր ու մասնակցային դարձնելու համար: Բայց այդ ամենը չեն բացառում նաև ավանդական մոտեցումների օգտագործումը: Հարց ու պատասխանը, նյութը վերհիշելը, վարժանքները, ուսուցչի բացատրական խոսքը այսօր էլ կարևոր են ու անհրաժեշտ ուսուցման համար: Բացի այդ՝ համագործակցային ուսուցումն ունի որոշակի ռիսկեր, որոնք անտեսել չի կարելի: Օրինակ՝ խմբային աշխատանքների ժամանակ որոշ աշակերտներ «գլուխ են պահում»: Արտաքուստ թվում է, թե երեխաներն ակտիվ են, բայց վերջում պարզվում է, որ մնացորդային գիտելիքների մակարդակը ցածր է: Հետևաբար՝ նոր մանկավարժության մեջ չպետք է լինեն մեթոդների և հնարների հակադրում: Բոլոր մեթոդներն ու հնարները ինչ-որ իրավիճակում կարող

են օգտակար լինել։ Ուսուցման մեթոդները հաճախ ընկալվում են որպես դեղատոմս։ Երբեմն նշվում է, որ այս կամ այն մեթոդը կիրառելու դեպքում մենք կկարողանանք հասնել մեր նպատակին։ Բայց մանկավարժության մեջ ընդհանրացված լուծումներ չկան։ Յուրաքանչյուր դաս, յուրաքանչյուր դասարան տարբեր է։ Մեկ դասարանում աշխատող մոտեցումը կարող է մի այլ դասարանում չաշխատել

Գործնական համատեքստում կփորձեմ ներկայացնել իմ սեփական փորձառության հիման վրա կատարած փոքրիկ հետազոտություն։ Կներկայացնեմ նույն դասարանում անցկացրած երկու դաս՝ ավանդական և համագործակցային մեթոդներով, ցույց կտամ դրանց տարբերությունները, վեր կհանեմ համեմատականները և կմատնանշեմ խնդրի լուծման իմ տարբերակը։ Երկու դասերն էլ անցկացրել եմ Նորավանի միջնակարգ դպրոցի VII^{ա} և VII^{բ} դասարաններում։

ԴԱՍ 1

Դասի թեման էր Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը։ Դասը անցկացրել եմ ավանդական մեթոդներով, շեշտը դրել եմ ուսուցչակենտրոն ուսուցման վրա։

Դասարան՝ VII^{ա}

Դասի նպատակներն էին բնութագրել պատմվածքի գլխավոր հերոսներին, վերլուծել կերպարները՝ մեկնաբանելով նրանց արարքների շարժառիթները, հույզերն ու ապրումները։ Սովորողի մոտ արմատավորել և ձևավորել այն համոզմունքը, որ ամենաթանկ ու մեծագույն հարստությունը մարդն է, պետք է սիրել, օգնել, խնամել նրան, քանի որ մարդ անփոխարինելի է։

Համառոտ ներկայացրի Դ. Դեմիրճյանի կենսագրությունը և պատմվածքի բովանդակությունը։ Միջառարկայական կապ ստեղծելով՝ ներկայացրի, թե պատմության որ ժամանակաշրջանն է իր արտացոլումը գտել պատմվածքում։ Այնուհետև աշակերտներին հանձնարարեցի վերարտադրել պատմվածքի բովանդակությունը, նկարագրել հերոսներին, վեր հանել նրանց բարոյահոգեբանական նկարագիրը։ Հանձնարարեցի պատմվածքից դուրս գրել

գոյականները և ենթարկել ձևաբանական վերլուծության։ Հանձնարարեցի դասից դուրս գրել խոսակցական բառերը և գրել դրամց գրական համարժեքները։

Դասի վերջում դասարանին ուղղեցի ամփոփիչ հարցեր։

1.Ո՞վ էր Հաճի աղան, կյանքի ի՞նչ ճանապարհ էր անցել։

2.«Թուրքը գալիս է» արտահայտությունը պատմության այն դարաշրջանն է ներկայացնում, երբ …

3.Ո՞վ էր Սրբունը և ինչո՞ւ էր ապրում եղբոր տանը։

4.Ինչո՞ւ Հաճի աղան դաժանացավ, անգթացավ և որոշեց փրկել կարևորագույնը՝ թողնելով «ավելորդը»։

5. Ինչո՞ւ էր Սրբունը լալիս ճանապարհի պատրաստության ժամանակ։

6.Գնահատեք Հաճի աղային դեպքերի ժամանակ և դեպքերից ամիսներ անց։

Աշակերտները փորձեցին իրենց ուժերի չափով պատասխանել հարցերին, դասարանում կային աշակերտներ, որ չներգրավվեցին դասի գործընթացին։ Հանձնարարեցի տնային աշխատանք.

Աղյուսակով ներկայացնել

«Կյանքում ինչն է ավելորդ»

«Կյանքում ինչն է կարևոր»

Դասի վերջում գնահատեցի ակտիվ մասնակցություն ցուցաբերած աշակերտներին։

Դաս 2

Երկրորդ դասը անցկացրի VII^{բ} դասարանում նույն թեմայով, որպեսզի կարողանամ առավել տեսանելի դարձնել դասի տարբերությունները։ Դասի թեման էր Դ. Դեմիրճյանի «Ավելորդը» պատմվածքը։ Դասի նպատակները թողեցի նույնը։ Այս դասին կիրառեցի «խճանկար» մեթոդը։ Դասարանը բաժանեցի 4 խմբի՝

յուրաքանչյուր խմբում 4 աշակերտ։ Պատմվածքը նույնպես բաժանեցի 4 հատվածի, խմբերից յուրաքանչյուրին հանձնարարեցի կարդալ և վերարտադրել հատվածի բովանդակությունը։ Խմբերը աշխատում էին մեծ ոգևորությամբ, անգամ ամենաթույլ աշակերտները փորձում էին արտահայտել իրենց տեսակետները։

Այնուհետև խմբերից յուրաքանչյուրին հանձնարարեցի տարբեր աշխատանքներ։

I խմբին հանձնարարեցի ներկայացնել պատմվածքի պատմական ժամանակաշրջանը՝ տեղեկություններ քաղելով նաև համացանցից։

II խմբին հանձնարարեցի ներկայացնել, թե ո՞վ էր Հաճի աղան և կյանքի ի՞նչ ճանապարհ էր անցել։

III խմբին հանձնանարվեց ներկայացնել Սրբունին և բացատրել, թե ինչո՞ւ էր ապրում եղբոր տանը։

IVՆկարագրել պատմվածքի մյուս հերոսներին և վեր հանել նրանց արարքների շարժառիթները։

Այս աշխատանքի համար հանձնարարեցի 5 րոպե։

Խմբերը հերթականությամբ ներկայացրին իրենց մտորումները, տեսակետները առաջադրված հարցերի շուրջ, կատարեցին լրացումներ։

Հաջորդ քայլս էր խմբերին հանձնարարել լեզվական աշխատանք բնագրի վրա։ Աշխատանքի ավարտից հետո կազմակերպեցի փոքրիկ բանավեճ՝ «Ինչպե՞ս կարող ես արդարացնել Հաճի աղայի արարքը» և «Ի՞նչ կանեիր, եթե դու լինեիր Հաճի աղայի փոխարեն» թեմաներով։

Այստեղ խմբերի ակտիվությունը, ստեղծագործական մտածողությունը հասան իրենց գագաթնակետին։

Աշակերտները գնահատեցին իրենց զուգահեռ խմբերի աշխատանքները. ի դեպ ունեին բավականին օբյեկտիվ մոտեցում։

Ամփոփում

Ստացված արդյունքների հիման վրա կատարեցի ամփոփում.

1. Միջանձնային փոխհարաբերությունների արդյունքում պարզվեց, որ հետազոտվող դասարանում կարող ենք դասապրոցեսը կազմակերպել օգտվելով համագործակցային ուսուցման ‹‹խճանկար ›› մեթոդից:

2. Հետազոտության ավարտից հետո աշակերտների գիտելիքների ստուգման արդյունքում կատարված վերլուծությունից երևում է, որ դասավանդման տվյալ մոդելի կիրառման դեպքում որոշ աշակերտներ իրենց գնահատականները բարելավել են ,մյուսներն էլ իրենց եղած գնահատականները պահպանել:

3. Դասի ընթացքում նկատվում էր աշակերտների փոխհարաբերությունների բնույթը.այն դարձել է ավելի ջերմ,մարդկային, աշակերտները սկսել էին ավելի լավ հասկանալ միմյանց և մեծացել էր աշակերտների իմացական ակտիվությունը և ստեղծագործական ինքնուրույնությունը ,որը մեծ ձեռքբերում է:

Այս հետազոտությամբ փորձ արվեց պատասխանել այն հարցին, թե սովորողների համագործակցային հմտությունների զարգացումը <<խճանկար>> մեթոդի կիրառումը որքանո՞վ է նպատակահարմար օգտագործել դասապրոցեսի ընթացքում և եթե նպատակահարմար է այն օգտագործել, ապա ինչպե՞ս անել դա, որպեսզի այն հնարավորինս արդյունավետ ազդեցություն ունենա ուսումնառության արդյունքների վրա:

Ուսուցչի արդյունավետ աշխատանքի նախապայմաններից մեկը ուսուցման բազմազան միջոցներին տիրապետելն է: Այս իմաստով ուսուցման նոր մեթոդների ու եղանակների իմացությունը շատ կարևոր է: Համագործակցային ուսուցման ներդրումը Հայաստանում իր հետ բերեց մեծ առաջընթաց ուսուցման և ուսումնառության գործընթացում: Մանկավարժական նշանակությունից բացի, այն ունի նաև հասարակական գործառույթ: Հայաստանում, ինչպես ամբողջ աշխարհում, ակնհայտ է, որ մարդիկ կարիք ունեն աշխատելու խմբերով, ուստի համագործակցային բազմազան հմտություններ են անհրաժեշտ խմբային աշխատանքն արդյունավետ դարձնելու համար:

Ես եկա այն եզրակացության, որ համագորշծակցային ուսուցումը արդյունավետ է այն դեպքում, երբ առկա է ոչ միայն աշակերտ-աշակերտ, աշակերտ-ուսուցիչ,

այլև ուսուցիչ-ուսուցիչ համագործակցությունը։ Աշակերտները շատ ավելի հեշտ են հարմարվում համագործակային աշխատառճին, քան ուսուցիչները։ Ուսուցման արդյունավետությունը շոշափելիորեն բարձրանում է, երբ ուսուցչական կազմը գործում է համախմբված։ Սա հատկապես գերխնդիր է մեզ համար, քանի որ մենք մեզ հաջողակ ենք համարում անհատական գործունեության մեջ, քան խմբային։ Մինրդեռ այսօր սոսկ անհատականություններին ապավինելով հնարավոր չէ հաջողության հասնել խնդիրներ լուծելիս։

«Ոչ մի հետաքրքիր նորույթ ի հայտ չի գալիս առանց համագործակցության»:

Ջեյմս Ուաթսոն

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ա. Հովհանիսյան , Կ. Հարությունյան , Ս. Խրիմյան ,Ս. Խաչատրյան, Ն. Բայաթյան , Լ. Ալեքսանյան , Վ. Պուրուկուրու, Համագործակցային ուսուցում, Ձեռնարկ, Երևան: «Անտարես»: 2006, 122 էջ:
2. Լ. Գրիգորյան, <<Ժամանակակից մանկավարժական ինտերակտիվ տեխնոլոգիաների կիրառման առանձնահատկությունները>>, Մանկավարժություն № 1, 2015 թ. :
3. Հ. Պետրոսյան ,<<Դիդակտիկա. Ավանդական և նորագույն տեխնոլոգիաների համադրումը ուսուցման գործընթացում>> :
4. Ջ. Գյուլամիրյան «Մայրենիի ուսուցման մեթոդիկա», Ձանգակ, Երևան 2018:
5. Ս. Խաչատրյան , «ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՀՆԱՐՆԵՐ », 2020 :
6. Վ. Ա. Սահկյան, «Համագործակցային ուսուցում:Դասավանդման մեթոդիկա» N1 2020թ., Գիտական տեղեկագիր:
7. Վ. Պուրուկուրու, «Համագործակցային ուսուցում, վերապատրաստողի ուղեցույց», Երևան, «Անտարես», 2006, 95 էջ: